CSOs4SLD

Հաջողության Պատմություններ

ՔՀԿ-ները հանուն Հայաստանում կայուն տեղական զարգացման

Հաջողության Պատմություններ

Բարի գալուստ «CSOs4SLD2. ՔՀԿ-ները հանուն կայուն տեղական զարգացման» ծրագրի ձեռքբերումներն ու արդյունքներն ամփոփող գրքույկ:
Ծրագրի հիմնական նպատակն է խթանել կայուն և ներառական տեղական զարգացումը Հայաստանի տարբեր մարզերում:
Մենք կենտրոնացել ենք հատկապես համայնքահեն ՔՀԿ-ների կարողությունների հզորացման ու նրանց տեսանելիության բարձրացման վրա՝ սերտ համագործակցություն հաստատելով տեղական դերակատարների հետ:

Այս գրքույկում ներկայացված են այն 10 համայնքահեն կազմակերպությունների ծրագրերը, որոնք դրամաշնորհային աջակցություն են ստացել CSOs4SLD2-ի շրջանակներում:

Յուրաքանչյուր էջ պատմում է մի նոր հաջողության մասին՝ ընդգծելով թե՛ կազմակերպությունների անձնական ու մասնագիտական աճը, թե՛ այն դրական փոփոխությունները, որոնք նրանք բերել են իրենց համայնքներին:

Մենք հավատում ենք, որ այս դրամաշնորհառուների աշխատանքը հիմք է դնում տեղական զարգացման նոր մշակույթի ձևավորմանը և քաղաքացիական հասարակության հետագա հզորացմանը:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո:
Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

2026 | Հայաստան

CSOs4SLD

Քաղաքացիական հասարակության հզորացում ԱԼԳ երկրներում

Հաջողության Պատմություն

«ԱՐՓԻ» ՀԿ

Լռությունից՝ զորակցություն. ինչպես Մարթան և վանաձորցի կանայք վերագտան իրենց ձայնն ու միասնականությունը

Վանաձորում ապաստանած արցախցի և տեղաբնակ կանանց համար առօրյան երկար ժամանակ լցված էր տրավմայով, մեկուսացմամբ և անորոշությամբ: Մարթա Պողոսյանի համար, ով Լեռնային Ղարաբաղից է տեղահանվել, նոր միջավայրում հարմարվելը մարտահրավեր էր ոչ միայն սոցիալապես, այլև հոգեբանորեն: Սկզբնական շրջանում տեղացի և արցախցի կանանց միջև կար նկատելի լարվածություն և անհամաձայնություններ. նրանք դժվարությամբ էին գտնում ընդհանուր լեզու՝ ապրելով սեփական ցավի ու խնդիրների մեջ փակված:

Մարթայի համար ամեն ինչ սկսեց փոխվել «Արփի» ՀԿ-ի իրականացրած «Իրավունք, ձայն և վստահություն՝կանանց համար» ծրագրի շնորհիվ: Հոգեբանական աջակցության խմբակների, ավազանկարչության և ձեռագործության ժամանակ տեղի ունեցավ ամենակարևորը՝ կանայք սկսեցին կիսվել իրենց հույզերով: Այդպահին պատնեշները փլվեցին. նրանք հասկացան, որ իրենց ապրումները նույնն են: Կոնֆլիկտային մթնոլորտը վերածվեց կարեկցանքի, իսկ կանայք՝ անծանոթներից դարձան միմյանց սատարող ընկերներ:

«Սկզբում կային լարվածություն և անհամաձայնություններ տեղացի ու արցախցի կանանց միջև, բայց հոգեբանական խմբակների ժամանակ, երբ սկսեցինք կիսվել մեր հույզերով, ամեն ինչ փոխվեց: Մենք հասկացանք, որ մեր ցավը նույնն է, և սկսեցինք աջակցել միմյանց: Այսօր մենք ոչ միայն թիմակիցներ ենք, այլև իրար հասկացող ընկերներ», - նշում է Մարթան:

Ծրագիրը բերեց նաև անսպասելի դրական փոփոխություններ: Ձեռագործության դասընթացներին մայրիկների հետ այցելող երեխաների ներգրավումը վերածվեց լիարժեք արտթերապիայի, ինչը զգալիորեն բարելավեց և հարթեց մայր-երեխա հարաբերությունները:

Այս ծրագիրը դարձավ շրջադարձային նաև հենց «Արփի» ՀԿ-ի համար: Փորձագետի աջակցությամբ վերանայվեց կազմակերպության ռազմավարական պլանը, ինչը թույլ տվեց կազմակերպությանը դառնալ ավելի դիմակայուն և պատրաստ արձագանքելու շահառուների նոր մարտահրավերներին:

Այսօր «Արփի» ՀԿ-ն մի հարթակ է, որտեղ տրավման վերածվում է ուժի, իսկ անհատական ձայնը՝ հավաքական վստահության:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

Հաջողության Պատմություն

Համայնքային զարգացումը հաճախ սկսվում է պարզ գաղափարից, սակայն իրական ազդեցությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ այդ գաղափարը կարողանում է համախմբել մարդկանց և ստեղծել կայուն համակարգեր: «Կայուն Ալավերդի» ծրագիրը հստակ օրինակ է, թե ինչպես նպատակային աջակցությունը կարող է փոխակերպել թե՛ համայնքը, թե՛ այն կազմակերպությունը, որը գործում է այդ համայնքում:

Ծրագիրն օգնեց «ՀԵԲԱ» սոցիալ-կրթական հասարակական կազմակերպությանը ոչ միայն իր դիրքն ամրապնդել Ալավերդի համայնքում՝ դառնալով վստահելի և կարևոր գործընկեր, այլ նաև էապես ամրապնդել իր ինստիտուցիոնալ կարողությունները: Ծրագիրը հնարավորություն տվեց կազմակերպությանը դուրս գալ ծառայությունների մատուցման շրջանակներից և դառնալ ներառական, համայնքահեն զարգացման գործընթացների վստահելի համակարգող:

Ծրագրի կարևորագույն ձեռքբերումներից մեկը Համայնքի սոցիալական զարգացման պլանի մշակումն էր՝ ռազմավարական փաստաթուղթ, որը հիմնված էր իրական կարիքների վրա և մշակվել էր մասնակցային գործընթացի միջոցով: Գործընթացը համախմբեց 84 ծառայություն մատուցողների և շահառուների՝ համայնքի չորս խոշոր բնակավայրերից՝ ստեղծելով երկխոսության, համագործակցության և համատեղ որոշումների կայացման յուրահատուկ հարթակ: Այս ներառական մոտեցման արդյունքում ձևավորվեց համայնքի զարգացման միասնական տեսլական իր հստակ առաջնահերթություններով:

Միաժամանակ, ծրագիրը զգալիորեն ընդլայնեց կազմակերպության գործընկերային կապերը և բարձրացրեց նրա նկատմամբ վստահությունը:

«ՀԵԲԱ» ՀԿ

Գաղափարից դեպի ազդեցություն. ինչպես «Կայուն Ալավերդի» ծրագիրը հզորացրեց «ՀԵԲԱ» ՀԿ-ին ևնրա դերը համայնքում

Տարբեր խմբերի և շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցության արդյունքում «ՀԵԲԱ»-ն ավելի հստակ դիրքավորվեց որպես վստահելի և ազդեցիկ տեղական դերակատար: Միևնույն ժամանակ, բազմաթիվ մասնակիցներ պասիվ շահառուներից դարձան ակտիվ գործընկերներ՝ նպաստելով համայնքի ավելի խոր ներգրավվածությանը և պատասխանատվության բարձրացմանը զարգացման գործընթացներում: Անմիջական արդյունքներից դուրս, ծրագիրը նպաստեց նաև համագործակցության և զարգացման համար կայուն հիմքերի ձևավորմանը, որտեղ համայնքի անդամներն ավելի ակտիվորեն են ներգրավվում, ազատորեն բարձրաձայնում իրենց կարիքները և մասնակցում տեղական զարգացման օրակարգի ձևավորմանը:
«Կայուն Ալավերդի» ծրագրի փորձը վկայում է, որ կարողությունների զարգացումն ու համայնքային ակտիվ մասնակցությունը համադրելու դեպքում հնարավոր է հասնել ոչ միայն կարճաժամկետ ձեռքբերումների, այլ նաև ապահովել երկարաժամկետ և կայուն փոփոխություններ՝ միաժամանակ ամրապնդելով ինչպես կազմակերպությունների, այնպես էլ համայնքների ներուժը:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

Հաջողության Պատմություն

Լոռի DMO

Երկար ժամանակ Սոնա Սաղաթելյանի համար աշխատաշուկայում սեփական տեղը գտնելն ու մասնագիտական կայացումը լի էին անորոշությամբ: Չնայած ոլորտի հանդեպ հետաքրքրությանը, նրան պակասում էին գործնական հմտություններն ու վստահությունը՝ դեպի թվային մարքեթինգ վճռական քայլ կատարելու համար:

Սոնայի համար ամեն ինչ սկսեց փոխվել, երբ նա միացավ Լոռի DMO-ի կրթական ծրագրին: Այն դարձավ ոչ միայն տեսական գիտելիքների աղբյուր, այլև շրջադարձային փուլ նրա նրամասնագիտական կյանքում:

Ծրագրի ընթացքում տեղի ունեցավ ամենակարևորը՝ չոր տեսությունից անցում կատարվեցգործնականի, ինչի շնորհիվ ատնեշները սկսեցին վերանալ. Սոնան սկսեց յուրացնելռազմավարական մտածողությունը, քոփիրայթինգի նրբությունները և սոցիալական մեդիայի կառավարման գործիքները: Ստացած գիտելիքները նա սկսեց վստահորեն կիրառել իրականնախագծերում:

Այսօր Սոնան այլևս սկսնակ չէ, ով անորոշության մեջ է: Նա հայտնի մարքեթինգային ընկերությունում թվային մարքեթինգի և բովանդակության մասնագետ է: Լոռի DMO-ում ձեռք բերված պատմասացության, լսարանի վերլուծության և վերլուծական մոտեցման հմտությունները նա այժմ հաջողությամբ կիրառում է տարբեր հայտնի բրենդների հետ աշխատանքում:

Դեպի թվային աշխարհ.
ինչպես Լոռի DMO-ն օգնեց Սոնային գտնել իր մասնագիտականուղին

«Ծրագիրն ինձ համար եղել է գործնական հմտությունների զարգացման կարևոր փուլ: Ստացածգիտելիքներս այսօր հաջողությամբ կիրառում եմ աշխատավայրում, որը մեծ մարքեթինգային ընկերություն է: Այսօր ես ունեմ մրցունակ պրոֆիլ», - նշում է Սոնան:

Ծրագիրը բերեց նաև այլ անսպասելի դրական փոփոխություններ: Բացի հիմնական աշխատանքից, Սոնան սկսեց ստանալ համագործակցության առաջարկներ նաև այլ կազմակերպություններից, ինչը վկայում է նրա ձեռք բերած հմտությունների բարձր պահանջարկիմասին:

Այս ծրագիրը դարձավ շրջադարձային՝ դժվարություններն ու աշխատաշուկայի մարտահրավերները վերածելով ուժի և մասնագիտական հավաքական վստահության: Սոնայի պատմությունը լավագույն ապացույցն է այն բանի, թե ինչպես ճիշտ կրթական աջակցությունըկարող է անհատին դարձնել աշխատաշուկայում պահանջված և վստահ մասնագետ:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

Հաջողության Պատմություն

«Լուսաստղ» ՀԿ

Երկար ժամանակ Լոռու մարզից հաշմանդամություն ունեցող երիտասարդ Էրիկ Ասուլյանը զգում էր, որ տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացները հեռու են իրենից և դժվար հասանելի: Համայնքային բյուջեի և առաջնահերթությունների վերաբերյալ քննարկումները թվում էին բարդ ու նախատեսված միայն մասնագետների կամ պաշտոնյաների համար: Ինչպես հաշմանդամություն ունեցող շատ այլ երիտասարդներ, Էրիկը ևս հազվադեպ էր տեսնում իրեն այդ գործընթացների մասնակից կամ հավատում, որ իր ձայնը կարող է որևէ բան փոխել: Ամեն ինչ սկսեց փոխվել, երբ Էրիկը միացավ «Մասնակցի՛ր, ներգրավվի՛ր» ծրագրի շրջանակներում իրականացվող նախաձեռնությանը: Ծրագրի նպատակն էր խթանել հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնակցությունը համայնքային որոշումների կայացմանը՝ հատկապես օգնելով նրանց հասկանալ և ներգրավվել տեղական բյուջետային գործընթացներում:

Սկզբում թեման թվում էր տեխնիկական և վախեցնող: Սակայն մի շարք ինտերակտիվ դասընթացների, մենթորության հանդիպումների և գործնական վարժությունների միջոցով Էրիկն աստիճանաբար սկսեց հասկանալ, թե ինչպես են ձևավորվում համայնքային բյուջեները, ինչպես են որոշվում ծախսային առաջնահերթությունները և ինչպես կարող են քաղաքացիներն ազդել այդ որոշումների վրա:

Ինքնավստահության աճին զուգընթաց՝ Էրիկը մյուս մասնակիցների հետ սկսեց վերլուծել տեղական բյուջեի վերաբերյալ տեղեկատվությունը և մշակել գործնական առաջարկներ՝ համայնքում ավելի ներառական սոցիալական ծրագրեր իրականացնելու համար: Առաջին անգամ նա պարզապես որոշումների կայացման դիտորդ չէր. նա ակտիվորեն ներկայացնում էր գաղափարներ և երկխոսության մեջ մտնում տեղական իշխանությունների հետ:

Մասնակցից մինչև «կրտսեր փորձագետ». Էրիկ Ասուլյանի ուղին դեպի քաղաքացիական ձայնիլսելիություն

Այս փորձառությունը հանգեցրեց խորը անձնային փոփոխության.
«Ինձ համար մեծագույն բացահայտումն այն էր, որ ես՝ որպես հաշմանդամություն ունեցող երիտասարդ, կարող եմ լինել համայնքային բարեփոխումների իրական մասնակից: Այսօր ես ինձ «կրտսեր փորձագետ» եմ զգում, քանի որ արդեն գիտեմ, թե ինչպես են կայացվում որոշումները և ինչպես կարող եմ ազդել համայնքիս բյուջեի վրա՝ այն ավելի ներառական դարձնելու համար»:

Էրիկի համար ծրագիրը միայն տեխնիկական հմտություններ ձեռք բերելու մասին չէր. այն սեփական ձայնը գտնելու և սեփական տեսակետի կարևորությունը գիտակցելու մասին էր: Այն, ինչ ժամանակին թվում էր փակ համակարգ, դարձել է մի հարթակ, որտեղ նա կարող է վստահորեն մասնակցել և հանդես գալ որպես փոփոխությունների ջատագով:

Այսօր Էրիկը ներկայացնում է Լոռու մարզի քաղաքացիական ակտիվիստների նոր սերունդը՝ երիտասարդների, ովքեր ոչ միայն ներառված են իրենց համայնքներին վերաբերող քննարկումներում, այլև ակտիվորեն օգնում են կերտել դրանք: Նրա ուղին փաստում է, որ ճիշտ հնարավորությունները, գիտելիքը և քաջալերանքը կարող են ինքնակասկածը վերափոխել առաջնորդության և նշանակալից քաղաքացիական ներգրավվածության:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

Հաջողության Պատմություն

«ՄԵՆՔ» ՀԿ

Երբ կայուն զարգացման նպատակները դառնում են սեփական ձայն լսելի դարձնելու միջոց. երիտասարդ Նարեի քաղաքացիական ճանապարհը

Լոռու մարզի Գյուլագարակ համայնքից երիտասարդ Նարե Օհանյանի համար տեղական խնդիրների լուծումն ու համայնքային կյանքին մասնակցելը երկար ժամանակ թվում էին իրականությունից հեռու գործընթացներ: Թեև նա նախկինում մասնակցել էր տարբեր դասընթացների, սակայն Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ) նրա համար նորություն էին և սկզբնական շրջանում ընկալվում էին որպես վերացական ու լոկ տեսական գաղափարներ:

Ամեն ինչ փոխվեց, երբ Նարեն միացավ «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ի իրականացրած «Կայուն զարգացման նպատակները համայնքներում. խնդիրներ և լուծումներ» ծրագրին: Դասընթացների միջոցով նա սկսեց գիտակցել, թե որքան սերտ է կապված ԿԶՆ-և մեր առօրյայի հետ և թե ինչպես ենք մենք ամեն օր մեր գործողություններով ազդում մոլորակի վրա: Իր նոր գիտելիքները նա գործնականում ամրապնդեց համայնքային խնդիրների քարտեզագրման գործընթացում, որտեղ կանանց և աղջիկների ուղիղ մասնակցությամբ վերհանվեցին տեղական իրական մարտահրավերները:

Այս փորձառությունը երիտասարդ աղջկան տվեց անսպասելի ինքնավստահություն: Կարևորելով գիտելիքների տարածումը՝ Նարեն և իր նման այլ երիտասարդներ Գյուլագարակ, Ստեփանավան և Տաշիր համայնքներում իրականացրեցին զրո բյուջեով իրազեկման արշավներ: Կիրառելով «հավասարը հավասարին» սկզբունքը՝ նրանք մեդիաարշավների և սեղանի կրթական խաղերի միջոցով իրենցտարեկիցներին իրազեկեցին ԿԶՆ-ների իրական դերակատարման մասին:

Նարեի քաղաքացիական վերափոխման կարևոր հանգրվանը դարձավ Ստեփանավանում կայացած ամփոփիչ ֆորումը, որտեղ նա առաջին անգամ հանդես եկավ որպես հանրային խոսնակ: Նա այլևս պարզապես մասնակից չէր, այլ վստահորեն ներկայացնում էր երիտասարդների տեսակետները պանելային քննարկման ժամանակ:

«Ես սկզբում չէի պատկերացնում, որ ԿԶՆ-ները կարող են այսքան մոտ լինել մեր առօրյա կյանքին և որ ես կարող եմ այդքան գիտելիք կուտակել դասընթացների արդյունքում: Հանրային խոսնակ լինելը բացահայտեց իմ ներքին ուժը, իսկ մեր իրականացրած արշավները ցույց տվեցին, որ նույնիսկ առանց մեծ ռեսուրսների մենք՝ երիտասարդներս, կարող ենք փոփոխություն բերել մեր համայնք»:

Նարեի ուղին ցույց տվեց, որ երիտասարդների համար ԿԶՆ-ները վերացական թվեր չեն, այլ սեփական համայնքը բարելավելու և առաջնորդ դառնալու իրական հանձնառություններ ու գործիքներ:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

Հաջողության Պատմություն

Երիտասարդներն հանուն փոփոխության» ՀԿ

Իրազեկումից դեպի գործողություն. ինչպես դրամաշնորհային ծրագիրը հզորացրեց «Երիտասարդներն հանուն փոփոխության» ՀԿ-ին

Մինչ այս դրամաշնորհը ստանալը, «Երիտասարդները հանուն փոփոխության» կազմակերպությունը հիմնականում աշխատում էր ժողովրդավարության խթանման, մարդու իրավունքների պաշտպանության և երիտասարդների հզորացման ուղղությամբ՝ ոլորտներ, որոնք միշտ եղել են մեր առաքելության առանցքում: Այնուամենայնիվ, անմիջական ներգրավվածությունը մասնակցային կառավարման մեջ, հատկապես մասնակցային բյուջետավորման ոլորտում, մեզ համար բոլորովին նոր մարտահրավեր էր:
Ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությունը ենթարկվեց զգալի տրանսֆորմացիայի՝ երկուստեք, ինչպես ծրագրերի իրականացման, այնպես էլ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման տեսանկյունից:

«Մենք կարողացանք դուրս գալ պարզապես իրազեկման բարձրացման շրջանակներից: Մուտք գործեցինք շատ ավելի գործնական և նշանակալի դաշտ, որտեղ սովորական քաղաքացիները՝ հատկապես երիտասարդները, ոչ միայն սովորում էին իրենց իրավունքների մասին, այլև իրականում մասնակցում էին որոշումների կայացման գործընթացներին, որոնք ազդում են իրենց առօրյա կյանքի վրա», նշում է կազմակերպության ղեկավար Գրիգոր Ջանիկյանը:

Ծրագրի կարևոր ձեռքբերումներից մեկը կազմակերպության աշխարհագրական ընդգրկման ընդլայնումն էր: Աշխատելով Երևանի սահմաններից դուրս՝ տարբեր մարզերում, ԵՀՓ ՀԿ-ն ամրապնդեց իր դաշտային ներկայությունը և ձևավորեց անմիջական կապեր բազմազան համայնքների հետ: Այս փորձը նպաստեց թիմի կարողությունների զարգացմանը՝ ավելի լավ հասկանալու տեղական կարիքները, հարմարեցնելու մոտեցումները տարբեր համատեքստերին և ձևավորելու վստահության վրա հիմնված համագործակցություն համայնքների ներկայացուցիչների հետ:
Դրամաշնորհը առանցքային դեր ունեցավ նաև կազմակերպության ներքին կարողությունների ամրապնդման գործում:

Ծրագրի ընթացքում թիմը ձեռք բերեց գործնական հմտություններ ֆասիլիտացիայի, մասնակցային մեթոդների և ներառական համայնքային ներգրավման ոլորտներում: Միաժամանակ նրանք ձեռք բերեցին փորձ բարդ, համայնքի կարիքներից բխող նախաձեռնությունների մշակման և իրականացման գործում՝ էապես բարելավելով ծրագրերի կառավարման և օպերացիոն կարողությունները:

«Այս դրամաշնորհը պարզապես ֆինանսավորում չէր: Այն հզորացրեց մեր կազմակերպությունը՝ տրամադրելով մեզ գործիքներ, գիտելիք և ինքնավստահություն՝ աճելու և համայնքներում իրական փոփոխություն բերելու համար», նշում է թիմը:

Այսօր «Երիտասարդներն հանուն փոփոխության» ՀԿ-ն ներկայանում է որպես ավելի ուժեղ և կայուն կազմակերպություն՝ ունակ ընդլայնելու իր գործունեությունը, ձևավորելու նոր գործընկերություններ և առաջ մղելու մասնակցային պրակտիկաները Հայաստանի ողջ տարածքում: Ծրագիրը ստեղծել է ամուր հիմք ապագա նախաձեռնությունների համար և ամրապնդել կազմակերպության դերը՝ որպես ժողովրդավարական զարգացման ակտիվ դերակատար երկրում:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

Հաջողության Պատմություն

Երբ Ժաննա Հակոբյանը առաջին անգամ մասնակցեց «Ասպարեզ» լրագրողների ակումբի կողմից կազմակերպված դասընթացին, նա դեռ չէր պատկերացնում, որ դա կդառնա իր քաղաքացիական ներգրավվածության ուղու սկիզբը: Ինչպես Կոտայքի մարզի շատ երիտասարդներ, նա մեծ հետաքրքրությամբ էր մոտենում սովորելուն, սակայն նախկինում որևէ փորձ չէր ունեցել տեղական ինքնակառավարման մոնիթորինգ իրականացնելու կամ հասկանալու, թե ինչպես են գործնականում աշխատում այնպիսի բարդ ոլորտներ, ինչպիսին է տեղական հարկերի և տուրքերի հավաքագրումը:

Այս ամենը փոխվեց երբ Ժաննան միացավ Աբովյան համայնքում իրականացվող թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդմանն ուղղված պիլոտային ծրագրին:

Ժաննան, այլ մոտիվացված երիտասարդների հետ միասին՝ որոնցից շատերը երիտասարդ կանայք էին այդ թվում Արցախից, մասնակցեց դաշտային մոնիթորինգի վերաբերյալ մասնագիտացված դասընթացի: Առաջին անգամ նա և իր թիմակիցները ուսումնասիրեցին, թե ինչպես են հաշվարկվում, հավաքագրվում և կառավարվում տեղական հարկերն ու տուրքերը, և ինչպես են այդ գործընթացներն անմիջականորեն ազդում համայնքի զարգացման վրա:

«Դասընթացի ընթացքում մենք ձեռք բերեցինք անհրաժեշտ գիտելիքներ: Սա մեր առաջին փորձն էր նման թեմայով մոնիթորինգ իրականացնելու, և այն շատ հետաքրքիր էր», հիշում է Ժաննան:

Նոր հմտություններով զինված երիտասարդների խումբը անցավ ուսուցումից գործնական աշխատանքի: Նրանք իրականացրեցին համայնքի հարկային բազայի և փաստացի մուտքերի մանրամասն ուսումնասիրություն՝ համադրելով իրական տվյալները համայնքապետարանի տրամադրած տեղեկատվության հետ: Նրանց աշխատանքը բացահայտեց կարևոր խնդիրներ՝ ընդգծելով բացերը, մատնանշելով տեղական եկամուտների ավելացման հնարավորությունները և այն ոլորտները, որտեղ համակարգային բարեփոխումներ են անհրաժեշտ:

Ասպարեզ ակումբ ՀԿ

Առաջին քայլերից դեպի իրական ազդեցություն. Ժաննայի ուղին դեպի քաղաքացիական մոնիթորինգ

Սակայն ազդեցությունը միայն տվյալների հավաքագրմամբ չսահմանափակվեց: Արդյունքները ամփոփվեցին համապարփակ զեկույցում, որը ներկայացվեց համայնքային իշխանությունների ներկայացուցիչներին, ավագանու անդամներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին: Ժաննայի և նրա թիմակիցների համար սա շրջադարձային պահ էր. նրանց աշխատանքը պարզապես ուսումնական վարժություն չէր, այլ իրական ներդրում տեղական կառավարման բարելավման շուրջ քննարկումներում:

Առաջին փորձը շուտով վերածվեց շարունակական ներգրավվածության հնարավորության:

Ստացված գիտելիքների և ինքնավստահության հիման վրա Ժաննան և նրա թիմը այժմ ներգրավված են «Ասպարեզ» լրագրողների ակումբի նոր նախաձեռնությունում՝ իրականացնելով նմանատիպ մոնիթորինգ Հայաստանի ևս երեք համայնքներում: Նրանց դերը զարգացում է ապրել՝ սովորողներից վերածվելով պրակտիկ մասնագետների, որոնք ակտիվորեն նպաստում են տեղական մակարդակում թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդմանը:

Ժաննայի պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես նպատակային աջակցությունն ու գործնական փորձը կարող են հետաքրքրությունը վերածել կարողության: Այսօր նա պարզապես ծրագրի մասնակից չէ, այլ հանդիսանում է երիտասարդ քաղաքացիական դերակատարների ցանցի մի մաս, որը մեծանում է և նպաստում է ավելի թափանցիկ և հաշվետու համայնքների ձևավորմանը:



Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

Հաջողության Պատմություն

Նինան՝ Մեծ Մանթաշի երիտասարդ բնակչուհին, նախկինում համայնքային բյուջեն ընկալում էր որպես հեռավոր, տեխնիկական և դժվար հասկանալի թեմա: Ինչպես շատ քաղաքացիներ, նա այն դիտարկում էր որպես փակ համակարգ՝ թվեր, որոնք չունեն հստակ իմաստ կամ առնչություն իր առօրյա կյանքի հետ:

Այս ընկալումը սկսեց փոխվել, երբ նա մասնակցեց «Compass» ՀԿ-ի կողմից կազմակերպված մասնակցային բյուջետավորման վերաբերյալ տեղեկատվական հանդիպումներին: Առաջին անգամ Նինան հասկացավ, որ համայնքային բյուջեն պարզապես փաստաթուղթ չէ դիտարկման համար, այլ գործիք՝ հասկանալու, հարցադրումներ անելու և ազդեցություն ունենալու համար: Այս գիտակցումը դարձավ շրջադարձային պահ՝ դրդելով նրան ավելի ակտիվ դեր ստանձնել և միանալ կազմակերպությանը որպես փորձնակ:

Ծրագրի շրջանակում իր ներգրավվածության ընթացքում Նինան մասնակցեց նպատակային վերապատրաստումների շարքի, որոնք ուղղված էին բյուջետային վերլուծության գործնական հմտությունների զարգացմանը: Քայլ առ քայլ նա սովորեց կողմնորոշվել բյուջեի կառուցվածքներում, տարբերակել ծախսային առաջնահերթությունները և հասկանալ ֆինանսական բաշխումների հիմքում ընկած քաղաքական որոշումները: Ավելի կարևոր է, որ նա սովորեց կիրառել վերլուծական գործիքներ՝ բարդ բյուջետային տվյալները մեկնաբանելու և ներկայացնելու համար:
«Մինչ ծրագրին մասնակցելը համայնքային բյուջեն ինձ համար պարզապես թվերի հավաքածու էր, բայց հիմա հասկանում եմ, որ այն համայնքի զարգացման բանալին է», - նշում է Նինան:

Այսօր Նինան կարողանում է ինքնուրույն վերլուծել բյուջետային տվյալները, պարզեցնել բարդ տեղեկատվությունը և այն ներկայացնել հասկանալի ու մատչելի ձևով: Այն, ինչը նախկինում վերացական հասկացություն էր, այժմ դարձել է իրական գործիք:

Կոմպասս կենտրոն ՀԿ

Պասիվ քաղաքացուց, դեպի բյուջեի վերլուծաբան. Նինան այժմ կարողանում է պարզեցնել և վերլուծելհամայնքային բյուջեն

«Ամենակարևորն այն է, որ ես հիմա գիտեմ՝ ինչպես օգտագործել այս գիտելիքը համայնքի համար, ոչ թեպահել միայն ինձ համար», - նշում է նա:

Նինայի ճանապարհը չի սահմանափակվել միայն ուսուցմամբ: Նա արդեն կիրառում է իր հմտությունները գործնականում՝ ներկայում ներգրավված լինելով մեկ այլ նախաձեռնությունում որպես մասնակցային բյուջետավորման գործընթացի օգնական և համագործակցելով ՏԻՄ ներկայացուցիչների հետ Արթիկում: Այս դերում նա աջակցում է բյուջետային գործընթացների ավելի թափանցիկ, ներառական և քաղաքացիների կարիքներին արձագանքող դարձնելուն: Նինայի պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես թիրախային կարողությունների զարգացումը կարող է պասիվ քաղաքացիներին վերածել ակտիվ դերակատարների:
Նման ծրագրերը՝ երիտասարդներին գործնական հմտությունները զարգացնելով և վերջիններիս ներգրավվելով տարբեր գործընթացներում , ոչ միայն զարգացնում են մասնակիցների անհատական կարողությունները, այլև ամրապնդում են մասնակցային կառավարումը տեղական մակարդակում:
«Մասնակցային բյուջետավորման գործընթացում ձեռք բերված յուրաքանչյուր հմտություն ինձ մեկ քայլ ավելի է մոտեցնում համայնքում իրական փոփոխություն բերելու նպատակին: Ուրախ եմ, որ այդ առաջին քայլը կարողացել եմ անել «Կոմպասս» ՀԿ թիմի հետ», - եզրափակում է Նինան:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

german cooperation DEUTSCHE ZUSAMMENARBEIT
Co-funded by the European Union
giz
ngo center
COMPASS

Հաջողության Պատմություն

Մկրտիչի համար, ով բնակվում է Գավառ համայնքի Գեղարքունիք բնակավայրում՝ Գավառագետ գետի հարևանությամբ, շրջակա միջավայրի պահպանությունը երբեք պարզապես վերացական գաղափար չի եղել. այն եղել է անձնական հանձնառություն: Տարիներ շարունակ նա ակտիվորեն մասնակցել է տեղական նախաձեռնություններին՝ ուղղված Սևանա լճի առջև ծառացած խնդիրների մասին իրազեկվածության բարձրացմանը և լուծումների առաջխաղացմանը: Սակայն, չնայած իր ներգրավվածությանը, նա երբեք լիարժեք չէր պատկերացրել լճի աղտոտման ավելի խորքային և ոչ ակնհայտ պատճառները:

Այս ընկալումը փոխվեց, երբ Մկրտիչը միացավ «SevanSan–Սևան. սանիտարական վերահսկողություն» նախագծին, որը իրականացվում էր «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի կողմից: Ծրագիրը նրա համար բացեց նոր ընկալման հարթություն՝ համադրելով բնապահպանական կրթությունը իրավական գիտելիքների և գործնական մոնիթորինգի հմտությունների հետ:

Դասընթացների ընթացքում Մկրտիչը սկսեց շրջակա միջավայրի պաշտպանությունը դիտարկել ոչ միայն որպես ակտիվիզմ, այլ որպես կառուցվածքային գործընթաց, որը պահանջում է տվյալներ, վերլուծություն և հիմնավորված գործողություն: Նրա պատկերացումները փոխող կարևոր բացահայտումներից մեկը ֆոսֆորի արտահոսքի դերն էր՝ որպես Սևանա լճի աղտոտման պատճառներից մեկը. խնդիր, որի մասին նա նախկինում խորությամբ չէր մտածել:

Աստիճանաբար նրա մոտեցումը փոխվեց ընդհանուր մտահոգությունից դեպի նպատակային և տեղեկացված ներգրավվածություն: Նա սկսեց ավելի համակարգված վերլուծել բնապահպանական խնդիրները՝ հասկանալով, թե որտեղ է առավել անհրաժեշտ իր միջամտությունը և ինչպես կարող է քաղաքացիների ներգրավվածությունը լինել ավելի արդյունավետ:

«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ

Երբ գիտելիքը վերածվում է գործողության. Մկրտիչի ճանապարհը դեպի Սևանի պահպանություն

«Մինչ այս ծրագիրը ես ակտիվ էի, բայց չունեի բավարար գիտելիք՝ խնդրի իրական խորությունը հասկանալու համար: Չիմա գիտեմ, թե ինչի վրա պետք է կենտրոնանամ և ինչպես կարող եմ ավելի արդյունավետ նպաստել Սևանի պահպանությանը», նշում է Մկրտիչը:

Այն, ինչ սկսվեց որպես ուսումնական փորձառություն, շուտով վերածվեց նրա քաղաքացիական դերի վերաիմաստավորման: Նոր գիտելիքներով և գործնական հմտություններով զինված՝ Մկրտիչը այժմ ավելի է պատրաստ ներգրավվելու տեղական բնապահպանական նախաձեռնություններում՝ նպաստելով ոչ միայն Սևանա լճի, այլև Գավառագետ գետի էկոլոգիական վիճակի բարելավմանը:

Ծրագիրը կարևոր էր նաև «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի համար, քանի որ այն կազմակերպության առաջին փորձն էր Գեղարքունիքի մարզում: Այն հնարավորություն տվեց ընդլայնել գործունեության աշխարհագրությունը և հիմք դնել նոր նախաձեռնությունների իրականացման համար:

Մկրտիչի պատմությունը ցույց է տալիս, որ իրազեկվածությունն ու ճիշտ ուղղորդված կարողությունների զարգացումը կարող են վերափոխել քաղաքացիական մասնակցությունը՝ այն դարձնելով ավելի ազդեցիկ:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ՔՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրական աշխատանքների կառավարում)» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

Քաղաքացիական հասարակության հզորացում Արևելյան երկրներում

CSOs4SLD

Հաջողության Պատմություն

Ինչպե՞ս դարձնել բարդ բնապահպանական խնդիրները հասկանալի և նույնիսկ հետաքրքիր երիտասարդների համար: Շիրակի մարզի Ախուրյան համայնքում գործող «Պանդո» համայնքային զարգացման ՀԿ-ի թիմի համար այս հարցը դարձավ նորարարության և փոփոխության մեկնարկային կետը:

Այս հարցին պատասխանելու համար կազմակերպությունը նախաձեռնեց իր առաջին ուսումնական սեղանի խաղի մշակումը՝ ինտերակտիվ գործիք, որը ոչ միայն կրթում է, այլև ակտիվորեն ներգրավում է գյուղական երիտասարդներին՝ իրենց համայնքներում բնապահպանական խնդիրների բացահայտման և լուծման գործընթացում:

«Պանդո»-ի համար սա պարզապես ծրագրային գործունեություն չէր: Սա մասնակցային կրթության համարձակ փորձ էր: Սահմանափակ ռեսուրսներով, բայց մեծ հավակնություններով թիմը նպատակ ուներ ստեղծել տեղային համատեքստին համապատասխան, երիտասարդների համատեղ մշակմամբ ձևավորված ուսումնական գործիք, որը բնապահպանական կրթությունը կվերածեր ներգրավող և իմաստալից փորձառության:

Գործընթացի կարևոր բաղադրիչներից էր երիտասարդների հետ միասին ստեղծումը: Բնապահպանական ճամբարի ընթացքում երիտասարդ մասնակիցները անմիջականորեն ներգրավվեցին խաղի նախագծման, փորձարկման և ձևավորման գործընթացներում: Նրանց թվում էր Ախուրյան գյուղից Մարիամը, ով ակտիվ դեր ունեցավ ինչպես մշակման, այնպես էլ փորձարկման փուլերում:

Մարիամի համար այս փորձառությունը շատ ավելին էր, քան պարզապես խաղի ստեղծումը. այն դարձավ քաղաքացիական գիտակցության և հզորացման տարածք: «Ճամբարի ընթացքում ես հասկացա, որ մենք՝ համայնքի երիտասարդներս, պարզապես դիտորդներ չենք. մենք կարող ենք դառնալ իրական մասնակիցներ՝ բարձրաձայնելով համայնքային խնդիրները», կիսվում է Մարիամը:

Գործընթացի ընթացքում նա նաև ձեռք բերեց փորձ բնապահպանական խնդիրների բացահայտման, դրանց շուրջ բաց քննարկումներ վարելու և www.teselem.am հարթակի միջոցով խնդիրները բարձրաձայնելու ու տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնելու գործում: Սա փոխեց Մարիամի պատկերացումը քաղաքացիական պատասխանատվության և մասնակցության մասին:

«Խնդիրները հարթակի միջոցով բարձրացնելը և դրանք տեղական ինքնակառավարմանը ներկայացնելը կարևոր փորձառություն էր, որի շնորհիվ ես դարձա ավելի պատասխանատու քաղաքացի», հավելում է նա:

«Պանդո» ՀԿ

Սովորելուց դեպի գործողություն. ինչպես «Պանդո» ՀԿ-ն շրջակա միջավայրի կրթությունը վերածեց երիտասարդների համար ներգրավման փորձի

«Պանդո» ՀԿ-ի համար ուսումնական խաղի ստեղծումը դարձավ կարևոր ինստիտուցիոնալ հանգրվան: Կազմակերպությունը հաջողությամբ ստեղծեց իր առաջին ինտերակտիվ ուսումնական գործիքը՝ հիմված «հավասարը-հավասարին» սկզբունքի վրա՝ վերածելով բնապահպանական կրթությունը երիտասարդներին ներգրավող և վերջիններիս կողմից առաջնորդվող գործընթացի: Խաղի ստեղծումից բացի, ծրագիրը նաև ամրապնդեց Շիրակի գյուղական երիտասարդների էկոլոգիական գիտելիքներն ու գործնական հմտությունները: Այն նպաստեց նաև համայնքային մակարդակում բնապահպանական խնդիրների գնահատմանը՝ հնարավորություն տալով երիտասարդներին վերլուծել տեղական խնդիրները և դրանց վերաբերյալ իրենց դիտարկումները ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ այսպիսով կամուրջ ստեղծելով երիտասարդների և որոշումների կայացնողների միջև:

Անդրադառնալով փորձառությանը՝ ծրագրի համակարգող Շուշանիկը ընդգծում է կազմակերպական կարողությունների վերափոխումը.

«Մեր առաջին ուսումնական խաղի ստեղծման գործընթացը ցույց տվեց, որ կրթությունը կարող է լինել գունավոր, հետաքրքիր և ազդեցիկ: Մենք տեսանք, թե ինչպես են երիտասարդները դիտորդներից վերածվում ակտիվ մասնակիցների, իսկ հետո՝ պատասխանատու և նախաձեռնող քաղաքացիների»:

Այսօր «Պանդո» ՀԿ-ի առաջին ուսումնական խաղը պարզապես արտադրանք չէ. այն մոդել է, թե ինչպես նորարարական և մասնակցային գործիքները կարող են բարձրացնել բնապահպանական իրազեկվածությունը, հզորացնել գյուղական երիտասարդությանը և խթանել իրական քաղաքացիական ներգրավվածություն տեղական մակարդակում:

Սույն հրապարակումը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի «CSOs4SLD2. ԹՀԿ-ներ հանուն կայուն տեղական զարգացման (դրամաշնորհների կառավարում)» ծրագրի շրջանակում GIZ-ի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագրի ներքո: Նյութի բովանդակությունը բացառապես «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի կառավարության, ԵՄ-ի կամ GIZ-ի տեսակետները:

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

Կայք	Էլ. փոստի հասցե	Հեռախոսահամար	Հասցե
www.ngoc.am	info@ngoc.am	+374 91743315	ք. Վանաձոր, Խորենացի 6/1